ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» փետրվարի 2019թ. N: 10 ք.Գյումրի

«ԳԵՏԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» և «ՆՈՐ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին՝

1. 2019 թվականի փետրվարի 15-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետափի միջնակարգ դպրոց» և «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացնել 2016-2018թթ ժամանակաշրջանի համակարգի գնահատման աուդիտ:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է